Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 422-Ա

04.02.2022թ.

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 24-ի №30-Ն հրամանի հավելված №17-ի և հիմք ընդունելով Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանի 2022 թվականի փետրվարի 4-ի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Նոր Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով Համալսարանում, Հենակետային վարժարանում (Ավագ դպրոցում) և Թիվ 57 հիմնական դպրոցում իրականացվող միջոցառումների պատասխանատու նշանակել Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Նարինե Սահակյանին (համաձայնությամբ):

2.Անձնակազմի և ուսանողների ջերմաչափման արդյունքների գրանցման գրանցամատյանների վարումը, համաձայն 2020 թվականի հոկտեմբերի 24-ի №30-Ն հրամանի հավելվածի, վերապահել ֆակուլտետներում դեկանատի համապատասխան մասնագետներին, իսկ ամբիոններում՝ ամբիոնների մասնագետներին՝ ներառյալ համահամալսարանական ամբիոնները:

3.Վարչական և սպասարկող այլ ստորաբաժանումներում ջերմաչափման արդյունքների գրանցման գրամցամատյանների վարումը, համաձայն 2020 թվականի հոկտեմբերի 24-ի №30-Ն հրամանի հավելվածի, վերապահել տվյալ ստորաբաժանման աշխատակիցներից մեկին, իսկ վերահսկողությունը վերապահել Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պետ Արփիկ Ափրիկյանին:

4.Հրահանգել Համալսարանի Անվտանգության ծառայության պետ Սամվել Ափրոյանին ապահովել Համալսարանի մուտքերում և միջանցքներում անհատական պաշտպանության միջոցների՝ դիմակների կիրառման վերահսկողությունը:

5.Համալսարանում մակերեսների ախտահանման աշխատանքների կատարման վերահսկողությունը վերապահել Տնտեսական վարչության պետ Վլադիմիր Մշեցյանին, իսկ դիմակների, ձեռքերի և մակերեսների մշակման համար նախատեսված հականեխիչ/ախտահանիչ միջոցների, անհատական պաշտպանության միջոցների ապահովումը՝ Համալսարանի Նյութատեխնիկական մատակարարման և գնումների համակարգման կենտրոնի ղեկավար Սուսաննա Ավետիսյանին:

6.Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանին:

ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՄԻՔՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

СЕКРЕТАРИАТ